

Հոդված 27 Արտահայտման ազատություն հաղորդաշար

2013 թ., մարտի 19 – ապրիլի 25

Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ ծրագրի շրջանակներում.
«Ընտրությունների հասարակական վերահսկում», «Քաղաքացիական լրագրությունը և
խոսքի ազատության խնդիրը Հայաստանում», «Քաղաքացիական շարժումները
Հայաստանում»

2013թ., մարտի 19 – ապրիլի 2 հեռարձակումներ

1. Տղամարդ

Ես զանգահարում եմ Արմավիրից: Ես խնդրում եմ Ձեր հեռուստարձակության միջոցով քաղաքապետին հայտնել հետևյալ միտքը՝ որ Երևանում ստեղծվի հուշարձանների պուրակ, որտեղ բոլոր ստեղծագործողները իրենց քանդակները կարող են տեղադրել այդ պուրակում կամ այգում մրցութային կարգով: Եվ գրա մի ժամանակ, երբ որ մենք կունենանք շատ հաճելի զբոսավայր թե՛ տեղի բնակչության, և թե՛ դրսից եկած այցելուների՝ տուրիստների համար: Երկրորդը՝ ինձ համար շատ հաճելի է, որ այսօր ես առաջի անգամ տեսնում եմ, որ դուք ձեր ստուդիա եք հրավիրել ոչ երևանցի մարդկանց, մարզերից, տվյալ դեպքում՝ Մարտունուց: Դա ինձ համար հաճելի է, ուրեմն ձեր ստուդիան հաստատ այն կարծիքին չէ, որ Հայաստանը միայն Երևանն է: Շնորհակալություն:

2. Կին

Գիտե՞ք դեռ Խորհրդային ժամանակաշրջանից խոսվում է Հայաստանը որպես տուրիզմի հետաքրքիր գոտի դարձնելու այսպես ասած գործի մասին: Խորհրդային կարգերի ժամանակվանից խոսվում ենք մինչև հիմա, բայց ոչ մի գործ չի արվում: Ես 73 տարեկան եմ, լրավ հիշում եմ էն ժամանակ ինչ ծրագրեր, ինչ բաներ կային, ինչ մշակույթ կունենանք տուրիզմի գոտի դարձնելու Սևանը, մի խոսքով, մեր պատմական լավ վայրեր ունենք չէ՞, պատմական ժառանգություն ունեցող տեսարժան վայրեր ունենք, մի խոսքով, խոսվում է, խոսվում, բայց ոչ մի գործ չի արվում, այդքան բան, այդ եմ ասում:

3. Կին

Ալո, մե բան կխնդրեմ Ձեզ, հաղորդում գնաց աստվածագիտություն թե աստվածաբանություն չիդեմ, ես էլ նստած կլսեմ: Էն ժամանակ, օր (որ) ես փոքր էի, ինձ ոչ ոք ասածու մասին ոչինչ չէր ասում, բայց ես կըսեի. «մի աստված, մեզ ստեղծած, վերև՝ աստված, ներքև՝ մենք»: Էդ գիդեի՞նք, ու մեր տատերն ու պապերն էլ օր (որ) գրքին մոդիկ կգնայինք, չէին թողնի, որ բացենք, թե «չի կարելի ասածու գիրքը վերցնել, կարդալ», բայց հիմի հանել եք տելեվիզորով մեկնաբանություն, էս կոմ, էն կոմ, վերև աստված կա, մեկ էլ մենք: Էն ժամանակ, օր աստված

հելյավ Քրիստոսին բերեց, ստեղծեց, կարգ գոյություն ուներ, տելելիզոր, ռադիո հեռախոս կա՞ր, որ ժողովրդի մեջ տարածվել էր, ...հանել էք ասածուն եսիմ տելելիզորով ցուցադրական, շտե վերն՝ աստված, ներքն՝ մենք: Սովետական միություն օր (որ) կար, էն ժամանակ հավելի, աստվածը, ոնց են ասում, բոլորն էլ կպաշտեին, պաշտողը կպաշտեր, չպաշտողը ինչքան էլ ուզեր քարոզեր, մեկը ես էն ժամանակ գիդեի, որ աստված կա, գոյություն ունի, վերնն է, կերթայի սուրբ մոմ կվառեի: Հմի ինչը հանել էք տելելիզորի մեջ, ռադիոյի մեջ, չիդեմ ինչ, աստված կա ու գոյություն ունի, ով գիդե կհասկնա: Սովետական միության ժամանակ Լեննականում կար ռուսական դպրոց, ու ժամին հարաբերությունները իրար դեմ դիմաց կնայեին, ռուսական դպրոցը հանեցին, օր (որ) եկեղեցիները իրար դեմուդեմ լինեն, ու մի անգամ մե քանըմ պատմեմ ձեզի, լսեք. ես էն ժամանակ 60-ը քանի թվերին 18-20 տարեկան էի երևի, հըմի 70քանի տարեկան եմ, միշտ ամսու 6-ին կուգային դռներս կգանգեին տերդերները կաղոթեին, ու մենք կուգենայինք փող տայինք, կուգենայինք՝ չտայինք, բայց էն ժամանակ, օր (որ) գուքային կաղոթեին, մի անգամ առիթ էղավ, օր դուռը խփեցին ամսու 6-ին, ես պտի էրթայի աշխատանքի, բացեցի, տերդերն էր, մտավ ներս «բա կարելի է՞ ձեր տունը օրհնել» , ըսե «խնդրեմ», էդ ժամանակ երևի 74-75 թվերն էր, արդեն ամուսնացել էի, էրեխա ունեի, եկավ բան էրեց, աղոթեց, ու ես սովորական մարդ եմ, համարյա եսիմ տարին մեկ 2 տարին մեկ էրթամ ժամերգության, բայց ինքս իմ մտքիս մեջ մե քանըմ կա՝ աստված, ով է, ուրդից է, ինքը կա, գոյություն ունի, էղա՞վ:

4. Տղամարդ

Դրանք էդ որ....ներողություն եմ խնդրում էլի, քննադատում են և այլ, և այլ, իրանք չգիտեն ինչ են անում.....էս ժողովրդի իրավիճակը, փախնում են, փախնում, իրանք ի՞նչեր են մտածում, ի՞նչ, ինչո՞վ կարողանում ազդե՞լ: Եթե լավ դեկավար լինեն, եթե լավ դեկավարեին, մարդիկ ոչ մի տեղ չէին փախնի ու կաշխատեին իրանց տուն տեղը կպահեին, ահա թե ինչ, շնորհակալություն:

5. Կին

Բարև Ձեզ, դիտում եմ էս հաղորդումը, քննարկում են հենց հիմա Երկիր Մեդիայով հետընտրական ինչ-որ բաներ, և նստած հանրապետականի այդ ներկայացուցիչը, որ ասում ա, որ Ձեր դեմքից էրևումա, որ դուք ուրիշ կարծիք չեք ընտրի, ուղղակի ասեք, որ ամոթ է էղպիսի բաներ անեք, որսն իրանց դեմքից էլ շատ պարզ էրևումա, որ խաբում են էս ժողովրդին, ու դրանից, կոպիտ ասած՝ կայֆ են բռնում: Անհարմար չի՞:

6. Տղամարդ

Ես խնդրում եմ այդ մարդասպան Սաֆարովին ազգանունը այլևս չարտահայտվի, դրան միայն մարդասպան ասել, հերոսին են ազգանունով կոչում, ոչ թե մարդասպանին: Շնորհակալություն:

7. Կին

Բարև Ձեզ, ես խնդր...հարցս ուղղում եմ պարոն Սահակյանին, թող ինձ պատասխանի, այսինքն՝ ամբողջ հանրությանը. մի՞թե Սերժ Սարգսյանը Իսրայել Հակոբկոխյանը երբ նստացույցի էր նստել իրեն արժանապատիվ էր համարում գնալ նրան հանդիպել, բայց չի համարձակվում Ռաֆֆի Հովհաննիսյանին հանդիպի, այդքանը: Շնորհակալություն:

8. Կին

Խնդրում եմ ոչ մի դեպքում մի նույնացրեք ժողովուրդի ձայնը Ռաֆֆի Հովհաննիսյանի համակիրների ձայնի հետ, ժողովուրդը դա այն մասան չէ, որ կանգնած է Ռաֆֆի Հովհաննիսյանի կողքին, ոչ մեկը այդ իրավունքը նրանց չի տվել, և Ձեր ստուդիան վերջերս ունի այդ միտումները անպայման կանգնել ընդդիմության կողքը, ինչի համա՞ր:

9. Տղամարդ

Ուրեմն հանձնաժողովներում բոլոր, կարելի է ասել, էնպես, ինչպես ես գիտեմ, բոլորը Հանրապետական կուսակցությունից են նախագահները հանձնաժողովների: Երբ անդամները կամ դիտորդները, տեսնելով էն խախտումները, դիմում են, էնպիսի վիճակ է ստեղծվում, որ միննույն է, չի անցնում մեր ասածը, փաստը փաստացի, որովհետև էնպես է կազմակերպված, որ մեկ հոգին, պատահում է, ոչինչ չի կարող անել: Ես առաջարկում եմ, օրինակ ինչու համար միշտ ընտրություններում պետք է նախագահները լինեն Հանրապետականից: Եթե արդարություն է, ապա թող հավասար ձևով, հավասար ձայներով, չնայած՝ գրված է, ձայն ունի, բայց ոչ մի կերպ չի անցնում: Այ, ընտրությունները կանցնի առանց խախտումների, եթե նույն իրավունքները, նույն ձայները կարողանան ինքները տալ, որովհետև նախագահության նախագահը միշտ Հանրապետական է, էնտեղ իհարկե օրգանները, ոստիկանները չեն լինում, մինչև նրանց կանչում են, մինչև ասում են, գիդեք էնպես են արտահայտում, որ ոչինչ չեն կարող, և էսպես կշարունակվի, եթե նույն տեմպով գնա: Այսքան, և ավելին կարելի է շատ ասել, բայց դե ինչ ասենք, արդեն ամեն ինչ արված է, միշտ նույն ընտրություններն են. այս անգամ այսքան եղավ, այս անգամ այսքան եղավ: Շնորհակալություն ուշադրության համար:

10. Տղամարդ

Ալո, բարև Ձեզ, Ձեզ անհանգստացնում է Հայաստանի քաղաքացի: Ինձ մի հարցա հետաքրքիր. այ որ ասում են ընտրակեղծիքների ժամանակ, ասենք, դիտորդներ եղել են մի մասը, հետո ասել են, որ մենք չենք դիմել, ու որոշ մաս էլ բնականաբար չեն դիմել, ու ասենք, չեն դիմել օրինապահ մարմիններին, բնականաբար: Ինչո՞վ էք, ասենք, համոզված, որ ժողովուրդը վստահում են օրինապահ մարմիններին, չէ՞ որ ձեր կողմից կառավարվող մարմիններ են, այսինքն՝ մարդիկ մի մասը վախենալով, մի մասը չվստահելով՝ չեն դիմել եղ մարմիններին: Թող հարցում անեն, թեկուզ սոցհարցում, տեսնեն, քանի տոկոսն է վստահում օրինապահ մարմիններին, ինձ թվումա, դա է պատճառը, որ որոշ դիմումներ գնացել են՝ բողոքներ, հետո, չգիտես ինչու, հետ են կանգնել իրանց ասածից, կամ, չգիտեմ, ասել են տենց բան չկա: Սկսած ինձնից՝ ոչ մեկ չի վստահում էս պահի դրությամբ օրինապահ մարմիններից

բռնած՝ ղեկավարությունից վերջացրած, որովհետև մարդկանց մոտ ընգելա էր վստահությունը:

11. Կին

Մեծ հայրենասեր եմ, սիրում եմ իմ երկիրը, ժողովրդիս, հիացած եմ նրանց, ինչ ասեմ, կյանք սիրելով, նրանց առաջադեմ հայացքներով, բայց և ասեմ, որ ո՛չ, ոչ մի անգամ ընդդիմադիր չեմ եղել, այժմ էլ ընդդիմադիր չեմ, բայց ապրում եմ այս երկրում, և, գիտե՞ք ինչ, երեկ լսում էի պրեզիդենտի խոսքը, և մտածում եմ, կարող է իրեն չե՞ն ասում, որ ժողովուրդը իրոք շատ վատ է ապրում, 37 տոկոս աղքատություն դա սարսափելի բան է, ինքը նամակ էր գրել Սերժ Թանգյանին, որ այո՛ թոռնիկս, մենք 3 Սերժ կդառնանք, բայց չէ որ հազարավոր, տասնյակ հազարավոր պապիկներ կան, որ նույնպես ունեն թոռնիկներ, կարող է նրանց անունը Սերժ չէ, որոնք սոված են պառկում, պապիկները չբողոքե՞ն, դուրս չգա՞ն: Կամ ֆեյսբուքով ապշում եմ, մտնում եմ, մարդիկ էդ ինչ բողոքներ են անում. եթե, գիտե՞ք ինչ, մի փոքր ապահոված լինեին, երևի չէին գնա էդ բողոքներին, ապահոված, այսինքն հանապազօրյա հաց ունենային: Եվ ֆեյսբուքում գրվում է, որ Սերժ Սարգսյանի եղբոր որդին մի հսկայական բուկետ է նվիրել կնոջը, և նկարը կա, ինչ որ այնքան մեծ է, որ մարդիկ գնում են նկարվում են, որը միլիոններ արժի, էդպես էլ գրված է, ասում է, ավելի լավ չէ, որ տաս մանկատանը այդ փողը, տաս մեր ծերանոցներին, ի վերջո, դա ավելի աստճոհաճո գործ չէ՞ր լինի, և ժողովրդի աչքից ընկնում են: Հետո, ամբողջ դեպուտատների տղաները, ընտանիքները, կան ընտանիքներ, որ մի ընտանիքից 3 դեպուտատ կա, եթե մյուսները, մեր հայ ազգում չկան ուրիշները, որ էդպես դեպուտատ լինեն, որ մի ընտանիքից չլինեն, որ մի կարծիք չունենան, բացի դրանից, գնում են դեսպաններ, բոլորի եղբայրները դեսպան են գնացել, էլ չեմ ասում՝ փեսաներից, և նրանք ոչ մեկը բարձր անցյալ չեն ունեցել, կամ ինչ են արել ժողովրդի համար, կամ դեսպանը դա երկրի առաջին դեմքն է արտասահմանում...

12. Կին

Ձեր հետ խոսում է բավական տարիք ունեցող մի կին, ի՞նչ կարիք կա էսքան հաղորդումներ, էսքան մարդկանց ներգրավել, երբ հարցի պատասխանը մեկն է՝ արդարացի ընտրություն կստացվի այն ժամանակ, երբ իշխանությունը ցանկանա, ուրիշ ոչ մի բան պետք չի, սայա իմ կարծիքը:

13. Տղամարդ

Մի հարց եմ ուզում տալ. Մի անգամ գոնե էդ մարդկանց հարց տվե՞ք. էդ գումարը, որ գյուղերում բաժանվելա, դրա մասին ի՞նչ կասեք:

14. Տղամարդ

Ուրեմն, ես ուզում եմ ասել, որ ընտրախախտումներ իրոք տեղի են ունեցել, ես լսեցի երեկ Մերժ Մարգարանի ելույթը, և շատ վրդովված էլ եմ, որովհետև այնտեղ շատ բաներ կար, որ ճիշտ չէր. կառավարությունում օլիգարխներ չկա՞ն, եթե չկան, ապա ինչպե՞ս են էդ տարածքները զավթում ու մարդկանց տներից հանում: Մարդիկ չեն կարողանում էսօր ապրել, հնարավոր չի ապրել: Ես կուզեի մի հաստ շատ կարևոր բան իմանալ.... ինքնորոշում կա՞ այդպիսի բան, թե չկա՞, և եթե կա, ապա իրենք խոսում են, որ կոմունիստների ժամանակ էսպես էր, լավ էր, որ կառուցում էին, մի խոսքով, բարգավաճում էր Հայաստանը, զարգանում էր, հապա ինչու՞ 70 թվականից մինչև ութանասուն անգամ ասեմ 4-5 թիվը արդեն գյուղերը լքվում էր, Հայաստանում հայ չէր մնում, և կարո՞ղ են ինձ ասել թուրքերը քանի տոկոս էին կազմում Հայաստանում, ամբողջ Հայաստանում, 70-ից մինչը 88 թիվը: Եթե կար ինքնաորոշում, ապա ինչ վտանգներ էր ունենալու մեր Հայաստանը, դա մեկ. կոմունիստների լավ գործերը, երկրորդը. ես ուզում եմ հասկանալ, եթե մեր պետությունը ժողովուրդը լքեց, կա՞ ինչ որ ասենք չափանիշ, եթե պետությունը չի քանդվում, չի լուծարվելու, ասենք, խոսքի, թեկուզ և մնա 100 հոգի, պետությունը չի լուծարվելու, որպեսզի ես իմանամ, արդյոք հայությունը պաշտպանվա՞ծ է լինելու ամբողջ աշխարհում, թե՞ պետությունը քանդվելուց հետո դեռ հայերը գլխի չեն, ինչ է գալու իրենց գլխին: Իմ կարծիքով, եթե պետությունը քանդվելու է, ապա համոզված եմ, որ 20-30 տարի հետո ամբողջ աշխարհում հայ չի մնալու: Շնորհակալություն:

15. Տղամարդ

Ինչու՞ վստահված անձը իրավունք չունի հաշվելու կամ պաշտպանելու իր թեկնածուի քվեաթերթիկները, կամ հանձնաժողովները ինչու՞ հավասարակշռված չեն, տեղամասերում մեծամասնություն են կազմում պրոֆեսիոնալ կեղծարարները տարբեր կուսակցություններից, արտասահմանյան դիտորդները հաշվարկ կատարելու ժամանակ ժամը 8-ից հետո տեղերում չեն եղել, կամ մասամբ են եղել, և ի նկատի ունեք դուք էդ չեղած դիտորդների կարծիքները:

16. Տղամարդ

Ալո, բարև Ձեզ, ես մեծ հետաքրքրությամբ նայում եմ Ձեր հաղորդումները, լսում, շատ հետաքրքիր է, բայց ես կցանկանայի ավելի սուր դնել հարցերը, քանզի բոլորին հասու չէ այդ լեզվով քաղաքակիրթ, էստեղ շատ մեծ բաներ հայտնագործել պետք չէ, ամեն ինչ պարզ է: Եթե նախագահը ասում է, որ չարիքը երկրի կաշառակերությունը և էլի մի բան ասեց, կաշառակերությունը չէ, և հանցագործությունը, չէ՞. ամեն ինչ պարզ է, մնում է օրենքի ուժ տալ էդ բոլորին և կանգնել մի կողմ, և իհարկե հանցագործությունը և կաշառակերությունը իհարկե դժբախտությունը չէ երկրի, ոմանց համար դա բախտավորություն է, որովհետև հանցագործները և կաշառակերները կազմավորում են իշխանություն, թող գան Շենգավիթ համայնքում, թող տեսնեն ընտրությունների ժամանակ ինչ էր կատարվում, թող վերցնեն, եթե համարձակվեն գան, թող վերցնեն խցիկները, և նկարահանեն էն, ինչ որ կա, Ամերիկա հայտնաբերել պետք չէ էստեղ, բայց ես ունեմ իմ նկատառումները. Եթե Ռաֆիի

Հովհաննիսյանին 550 000 ընտրողները կաշառքները ձեռքերը ներկայանային՝ որպես փաստացի ապացույցներ, մեկ է Սահմանադրական Դատարանին չէր հերիքելու ինչ-որ թղթեր, նորից ինչ-որ ձևակերպումներ, և դա նորից հանգեցնելու էր նրան, որ ոչ մի բան ապացուցել հնարավոր չէ, քանի որ գոռոխայությամբ է ամեն ինչ կատարվում, և իրավական դաշտի վրա հույս դնել պետք չէ, քանի որ ես ինքս վկա եմ, և իմ արվեստակից, արվեստագետ ընկերներից շատերը, որ այդ դատական համակարգում հաղթանակներ տարած «.....» հիմնադրամում հազարավոր փաստերի ճնշման տակ չկարողացանք արդյունքի հասնել նաև Եվրոպական Դատարանում: Եթե պետք է, ես կարող եմ ներկայացնել այդ ամբողջ կապոցը փաստաթղթերի, և տեսնել, թե ինչ համակարգ ունեն, ինչ Սահմանադրական Դատարաններ, ինչ Մուկույաններ, հազարավոր փաստերի տակ ապացուցեցինք, որ իրավունքների խախտում է տեղի ունեցել այդ հիմնադրամում, ինչ ուզել արվել է, նրանց պարզերես հանեցինք, և այսօրվա նախագահը նրան Մեսրոպ Մաշտոցի շքանշան նույնիսկ հանձնեց, դրա մասին գրվեց թերթերում: Էսպիսի սուր բաներ պետք է դնել, գիտեք, որովհետև մեր մարդկանցից շատերը չեն հասկանում, նրանց պետք է այլ լեզվով խոսել, խոսել հանցագործի լեզվով, խոսել կաշառակերի լեզվով, և այսքանը, ուրեմն հաջողություն:

17. Տղամարդ

Բարև Ձեզ, ես օպերային երգիչ եմ, ես ուշադիր, ուշադիր եմ ձեր հաղորդումների նկատմամբ, ...պարզապես ես ուզում եմ մի բան հասկանալ. ամեն տեղ խոսվում է, որ ընտրությունների ժամանակ դիտորդներ չեն լինում, դիտորդներ չեն եղել, և եթե, գիտեք, դիտորդներ չկա, էդ ուրեմն Սահմանադրությունը պարտավորեցնում է խախտումներ անել, կեղծիքներ անել, գողանալ ձայներ, ենթադրենք, չկան դիտորդներ, ինչ, ինչի՞ մասին է խոսքը, որտեղ դիտորդներ չկան, պարտադիր պետք է...հասկացանք, ապացուցելն է դժվարանում, բայց և նաև պարտադիր չէ գողանալ ձայները կամ կեղծիքներ անել, եթե չկան դիտորդներ: Ես համոզված եմ դրանում, որ քաղաքակիրթ աշխարհում անպայման չի պահակներ դնել ամեն տեղ, որպեսզի գողություն չլինի, չէ՞: Մենք քաղաքակիրթ մարդկանց հետ կապ ունենք, գործ ունենք: Եվ վերջապես շեշտը դնել, որ երիտասարդ ենք, չգիտենք ինչ, նոր հանրապետություն, դեռ չկա տրադիցիաներ, չգիտեմ ինչ պառլամենտարիզմի և այլն... եթե եղբան մենք գիտակցություն ունենք, ինչն է՞ խանգարում, եթե մի աննորմալ մարդ, հասկանում եք, հոգեկան հիվանդ կարողանումա անալիզի ենթարկել իր հիվանդությունը, բա կարելի է՞ նրան հավատալ, որ ինքը հոգեկան է: Եթե կարողանում ենք մենք ապացուցել, խոսել էն մասին, որ նոր ենք, երիտասարդ ենք և այլն, ինչն է՞ խանգարում մեկ րոպե հետո փոխել մեր վերաբերմունքը: Շնորհակալություն:

Կրոնական հանդուրժողականություն: “Քրիստոնեություն և Իսլամ”, “Կրոն և գիտություն”, “Եկեղեցու արդիականացման խնդիրները”

2013թ., ապրիլի 9 – ապրիլի 23

18. Կին

Իմ հաղորդագրությունը այն կլինի, որ մուսուլմանը չպտի նստի կամ կանգնի մեր Մատենադարանի սրբության սրբոց շենքի առջև և գովվի/կոփվի իր գաղափարներով, չգիտեմ, չպիտի լինի նման բան, էդ մեկ, մյուսն էլ...լավ, մյուսն էլ հետո կասեմ:

19. Կին (շարունակություն)

Ուրեմն, իրենք, չգիտեմ, իրենց հյուրի պես չեն պահում; ամբողջ կյանքում չեմ տեսել, որ հայ մարդ գազոնների մեջ, խոտերի մեջ պառկի, իսկ իրենք պառկում են խոտերի մեջ, կանայք էլ փեշերը սենց քցում են ու նստում են հենց Հրապարակի ջրերի մոտ խոտերի մեջ, իրանց հյուրի պես չեն պահում, մեր էրեխեքին տեղ չկա մեր հողի վրա ապրելու, շնչելու, դրսերն են բոլորը, իսկ իրենք էստեղ իրենց տանտեր են զգում, և դա իմ կողմից կոնկրետ հանդուրժելի չի, շնորհակալություն:

20. Տղամարդ

Կներեք, իրավունք կա՞, որ Ջիվան Գասպարյանը կամ հասարակ քաղաքացին սահմանադրական գիրքը տանի տա Սերժ Սարգսյանին, որպեսզի նա ձեռքը դնի Սահմանադրության վրա և երդվի, կա՞ տենց իրավունք, կարա՞ հասարակ քաղաքացին անգամ նման բան անի:

21. Կին

Ես վերջին պահին նայեցի, չհասկացա էն կինը ով էր, ասենք ինչացու էր, ամեն դեպքում հոգևորականի հետ նման ձևով չի կարելի խոսել, և մեղավոր մարդիկ են խուսափում իսկական հավատքից, և երևի նա նրանցից էր՝ շատ մեղք գործած, որ չէր ուզում դարձի գալ:

22. Տղամարդ

հենց նոր վերջացավ «Հոդված 27» քննարկումը, ես քիմիական գիտությունների թեկնածու եմ, բնապաշտ եմ, գտնում եմ, որ կրոնը մարդու և մարդկության թշնամին է:

23. Կին

Բարև Ձեզ, ես ուզում էի իմ կարծիքն ասելի, որ էրեկվա հաղորդաշարից ելնելով էլի. թող մասնակցեն այն մարդիկ, ովքեր կարդացել են Աստվածաշունչ, խոսքս DJ-ի մասին էր, որ չէր կարդացել ու հավատացնում էր, որ ինքը հավատում է, բայց հավատում է նա, ով կարդում է: Հավատքը կարդալով է, իսկ ինքը եթե գիտություն ունի բնագիտական ու կարծում է, որ ինքը

առաջացել է շիմպանզեից, թող մի որևէ ապացույց, ինչ–որ մի ծնունդ ցույց տա, ապացուցի էս դարերի ընթացքում, իր կյանքի, իր օրինակով թեկուզ, չգիտեմ ինչպես, որ շիմպանզեից հիմա կարող է ծնվել մարդ, մարդ, որին արարել է Աստված՝ իր պատկերով և իր նմանությամբ, իսկ հիմա թե ինչ է ապացուցում, թե որ բույսը, որ կենդանին ինչ կառուցվածք ունի, իրա սովորելով ինքը եթե կարողանում է 98 տոկոսով ապացուցել դա, դա դեռ ոչինչ չի նշանակում, չէ՞ որ կառուցվածքը դեռ ոչինչ չի ասում Աստծո խոսքի դիմաց: Կարող էի շատ խոսել, եթե... այսինքն ոչ թե շատ խոսել, ավելի ճիշտ, մի՛ կանչեք հաղորդման էդ տեսակ մարդկանց, ովքեր տանում են դեպի Սողոմ և Գոմոր:

24. Կին

Ես ուզում էի ասել, որ դպրոցներում շատ պարտադիր է, որ կարդան ու կրթվեն ու ճանաչեն Քրիստոսին, Աստվածաշունչը կրթեն ուսյալ մարդիկ, ինչպես քահանաները, ովքեր սովորել են երկար տարիներ, ակադեմիաներ են ավարտել, չգիտեմ, ես չեմ ուզում փիլիսոփայել, որովհետեւ եթե նայում ենք շրջապատում, ովքեր հավատում են, նրանք Աստծո գառան նման պահպանված են, ու ես հետևողական եմ ու տեսնում եմ, Սողոմ–Գոմոր ասելով նրան եմ հանգում էն բանի համար, որ երեխաները եթե չեն ճանաչում, չեն կարդում Աստվածաշունչ ու չգիտեն, թե ինչի հանկարծ եղավ Սողոմ–Գոմոր, Նրանց թվում է, թե նրանք կենդանիներ են, հիմա ապրում են, պիտի վայելեն ու հետո ինչ կլինի, թող լինի, թեկուզ Սողոմ–Գոմոր էլ լինի, թեկուզ վառվեն, անցնեն–գնան էլ: Բայց եթե կարդան Աստվածաշունչը, եթե նրանց սովորեցնեն, եթե նրանք լցվեն հավատքով, նորից եմ կրկնում՝ կարդալով է լինում հավատքը, նրանք կպահպանվեն, յուրաքանչյուր տղա նույնիսկ հիմա պահպանված չի, աչքս տեսնում ամ, թե ոնց են երեխաները գնում դպրոց, պատերի տակ տղաներ են կանգնած, սպասում են, ծնողնա տանում, եթե չի տանում, նրանք են տանում, չի՛ կարելի հանկարծ վերցնել մի գիտության շուրջ ու սկսել փիլիսոփայել, որ մարդն առաջացավ... չէ, մարդը ստեղծեց Աստված ինքը՝ իր նման, իր պատկերով և ամեն մարդուն իրա գործը անելու էստեղ, ոչ թե փիլիսոփայենք մեկս մեկին համար, չգիտեմ ինչ ուսուցումներ հանենք դուրս, ապացուցենք, որ հավատքը մի այլ բանա, դրա համար չի կարելի, ուրիշ առարկայական գիտություն, այլ ընդամենը՝ հավատալ Աստծուն: Շնորհակալություն:

25. Տղամարդ

Ես ուզում էի մի հատ հարց ուղղել, որ ինքը կապիկի՞ց ամեն ինչ, որ ուրանում ամ իրեն ստեղծող Աստծուն: Չի էլ ամաչում: Աստված ստեղծեց մարդուն, և վայելումա մարդը երկնքում և երկրի վրա եղած բոլոր հարստությունները, ո՞նց ամ ուրանում այդ կիսակույր կինը...այդ աղջիկը, որ ուրանումա իրեն ստեղծող Աստծուն: Իսկականից որ այդպիսիներն են կապիկից ծնվել:

26. Կին

Ես հիմա լսում եմ հաղորդաշարը, հենց ինձ շատ հետաքրքիր է այդ բժշկի անունը, անկեղծ ասած չգիտեմ արտահայտությունները, խորհուրդ կտայի, որ իրա էսպես անձնական

կարծիքները ընդհանուր չտարածեր հեռուստատեսությամբ, որովհետև շատ սխալ է, նախ՝ մենք առաջին քրիստոնեություն ընդունած ազգն ենք և ավելի պետքա նպաստենք, այլ ոչ թե հակառակ խոսել: Ինձ համար շատ տհաճ է, երբ որ լսում եմ, որ շատ երիտասարդներ, իրոք, լսում են և կարողա շեղվեն, ավելի շատ պետքա կարդան մեր արմատներին, ծառը իր արմատներով է հարուստ, էնպես որ մեր ազգն էլ ինչքան հետ դառնա իր արմատներին, էնքան ավելի միահամուռ կլինի, խաղաղություն կլինի: Էնպես որ էս բոլորը ի նպաստ չի գնում մեր ազգին և խաղաղությանը:

27. Կին

Ես ձեզ գանգահարում եմ երեքշաբթի օրը ձեր հեռուստաալիքով եկեղեցում մողեռնիզացիայի թեմայի շուրջը քննարկման համար: Մեր ժողովուրդը Քրիստոնեությունը ընդունել է որպես պետական կրոն 1700 և ավելի տարիներ առաջ: Քրիստոնեությունը կրոնական կազմակերպություն չէ՛. այն կյանք է բոլոր բարոյական հիմքերով: Այն մարդիկ, որոնք չեն մասնակցում եկեղեցու արարողություններին, իրավունք չի վերաբերվում խոսել եկեղեցու մողեռնացիայի թեմայի շուրջը: Եկեղեցին հագուստ չէ՛, որ հարմարեցնեն մողային: Խնդրում եմ հաղորդել բժիշկ Թորոսյանին, որն մի ծառա չի կարող ծառայել երկու տիրոջ. կամ պետք է ծառայի Աստծում, կամ էլ Մամոնային: